




ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 101

28 ՅՈՒՆԻՍ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԷԱՐԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՔԱՌ-ԱՌ-ԵՐՌ-

Երրորդ տարի ② 28 Յունիս 1913 ② Թիւ 101

«Մերազան Քահանայապետն Պոս Ժ. կը մաղթէ որ Կարողիկէ Աւստրալիաց շաքապերէրը շա-
րունակէ Հայաստանի կարողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարէ, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղ քանաց արդիւնաւորութեան համար
Մերազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաքապերէրը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կարդ. Մէրի տէր Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքան, Հայ Կարողիկէ Պատրիարք Կիլիկիո
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅՐ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՍ

(Շար.)

Գ. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, ազնուականաց
դասակարգէն, Յունաստան ճամբորդած և խո-
րունկ ուսմունք առած, և Վանան Մամիկոն-
եան Մարզպանին առջեւ մեծ շնորհ գտած ու
Վանաց առաջնորդ կարգուած էր, և անոր
առաջարկովը գրեց իր Հայոց պատմութիւնը
(384 է մինչեւ 485): Առ հասարակ մեծ քըն-
նադասները գինքը կը գտնեն կատարելապէս
ճշմարտախօս և արժանահաւատ:

Արդ Ղազար Փարպեցւոյ համար Ազո-
թանգեղոսի պատմութիւնը արժանի է ամէն
վստահութեան. Սկիզբն առաջին գրոց պատ-
մութեան Հայոց, որում սկիզբն արարեալ

պատմեաց ՍՏՈՒԳԻԻ այրն երանելի Ազաթան-
գեղոս: Բիշ վերջը. Ձոր յարմարապէս պատ-
մեալ ծանոյց մեզ երանելին Ազաթանգեղոս,
այր բանիբուն գիտութեամբ եւ լի ամենայն
հրահանգիւ, ՍՏՈՒԳԱԲԱՆ: Եւ Հայոց դարձին
նկատմամբ պղտիկ համառօտութիւն մը ընելէ
վերջը, այսպէս կը կնքէ իր խօսքը. Ձայս
ամենայն, եւս առաւել քան գտյն գիտութիւն,
յիւրում ՀԱՍՏԱՏՈՒՆ եւ ԱՆՍԽԱԼ կարգա-
ւորութեան՝ պատմեաց մեզ երանելի այրն
Ասուծոյ Ազաթանգեղոս: *

Ուրեմն Ղազարայ Փարպեցւոյ համար Ա-
զաթանգեղոսի պատմութիւնը, ըստ ամենայն
մասանց, պոնէ՝ յէականին, ստոյգ է և ար-
ժանահաւատ. ուստի և հետեւեալքար ի Հոռոմ
ճանապարհորդութիւնը:

Դ. ԵՂԻՇԷ Եպիսկոպոս, ականատես և
հիմնադրի պատմող Վարդանանց սնմոռաց պա-

* Յառաջարած, էջ 1-7, Տպ. Վենետ. 1873.

տերազմին, կը պատմէ թէ այս պատերազմը դեռ չսկսած, Հայք յերկիրն արեւմտից պատգամաւոր մը ղրկեցին հեպով* առ Թէոդոս Բ. Փոքր՝ Կայսր (408—440), խնդրել ի նշմանէ օգնականութիւն ստանալու ընդդէմ Պարսից։ Այս պատգամաւորը մեծ նախարարներէն մէկն էր, Գրուսեանց տոհմէն՝ Ատոմ։ Եղիշէ կը դնէ Հայոց գրած աղերսանաց թուղթին (հրովարտակին) պատճէնը**։ Ասոր մէջ կը յիշեցնեն Թէոդոսի թէ՛ Հայերն ունին զանազան յիշատակարանն զառաքինի նախնեացն ձերոց (Հռոմայեցւոց), որոնք Եւրոպայէն անցնելով տիրեցին նաև Ասիացւոց կողմանցն և յայնչափ մեծ իշխանութեան, դասակարգեց մեծ եւ սիրելի զՀայոց աշխարհս անուանեին։ Սոր վրայ անմիջապէս կը յաւելուս հետեւեալ նշանաւոր խօսքերը.

Վասն որոյ եւ նախնին մեր Տրդատիս յիշելով զառաջին սերն ձեր, որ ի տալուքեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց, սպրեալ սնաւ յերկիրդ Յունաց եւ ի ձեռն թագաւորեալ Տրդատ հայրենի աշխարհիս, սոյնպէս եւ զհաւաստն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռոմայ, լուսաւորեաց զխաւարս յին կողմանս հիւսիսոյ։

Եղիշէի այս վկայութիւնը յոյժ թանկագին և կատարելապէս վճռական է. կարծես Ազաթանգեղոսի համառօտութիւնն է, այնքան ապահով կերպով կը հաստատէ, կը հաւատարմացնէ զայն։ Եւ Եղիշէ կը գրէր զայս Հայոց ամենալուսաւորեալ մէկ ժամանակը, երբ մատենագրական խոյզն, յոյզն ու կորով իրենց պապականիւնին հասած էին, որու պանծալի օրինակ է նոյն ինքն Եղիշէի այդ փոքրիկ, ոսկեղինիկ երկատիրութիւնը՝ արժանի ամենամեծ պատմաբաններու մատենից քով դասուելու։ Եւ պէտք է դիտել որ Եղիշէ չէ բուն վկայողը, այլ անոր հետ ամբողջ կղերականութիւնը, նախարարը,

աւագանին և Հայոց աշխարհ, որոնք գրեցին այդ հրովարտակը։

Եղիշէ շարունակելով այս պատմութիւնը, կը գրէ. Եւ իբրեւ յանդիման եղեն մեծի թագաւորին, եւ ընթերցան զգիր պաղտասանաց Հայոց աշխարհին եւ զյիշատակարանն նախնեացն, բազում մասեանք ի մեջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուլիս հաստատութեան ի ներքս գտանեին։

Ահա նոր լոյս, նոր հաւաստիք, վճռական և անընդհատկաց։ Ազաթանգեղոս կը հաստատուի նաև Հռոմայ արքունական գրականին մէջ պահուած հին յիշատակարաններէն (documents) և բազում մասեանքներէն։ Եւ այս ո՛չ միայն դաշինքներուն, այլ եւ ի Հռոմ ճանապարհորդութեան հաստատութիւնն է, այն ուղղափառ հաւատքին զոր Տրդատ Գրեգորի հետ Հռոմ զայցած աստիճաններէնցաւ Ս. Եպիսկոպոսապետէն Հռոմայ՝ Սեղբեւորոսէ։

Ե. ԽՈՐԵՆԱՅԻ, թէեւ յետագոյն պատմիչ, բայց իր համառօտութեամբ վճռաւոր, կորովի և բազմաշնորհ, և մօտաւոր դէպքերու համար անկասկած է, մանաւանդ որ այս ժամանակներու արդէն ծանօթ դէպքերը մասնաւոր զգուշութեամբ պրպտած, քննած և — անշուշտ իր երկար ճամբորդութեան միջոցին ի Յունաստան, ի Հռոմ և ի Բիւզանդիոն — արտաքին պատմիչները և դիւանները ուսումնասիրելէ վերջը միայն աւանդած է, ուստի և արժանահաւատ յեականին, ինչպէս ինքը կ'ըսէ. Բայց որ ինչ եւ ի թագաւորութեանն Տրդատայ... ոչ հեղգութեամբ եւ անզգուշաբար վրիպեալ, եւ ոչ կամաւոր սխալանքով ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց դիւանագիր մասեանցն Յունաց են*։

Ուստի Խորենացւոյն մի քանի վկայութիւնները յառաջ բերենք։

ա. Ընդ նոյն աւուրս լինին հարսանիք եւ Մաքսիմիանայ դստերն Դիոկղեսիանոսի ի Նիկովիդայ, փեսայանալով նմա Կոստանդիանոսի Կեսարի, որդւոյ Կոստայ թագաւորին

* Ղ. Փարպեցի կ'ըսէ թէ այս պատգամաւորներն էին Վահան Երեմիայն Ամատունեանց, Հմայեակ եղբայր երանելի զօրավարին Հայոց Վարդանայ և երանելի Մերհուրտան Արծրունիի։ Էջ 184—185 և 216—217։

** Էջ 422, Տպ. Վենետ. 1864։

* Խոր., Դիւք Բ. Հէ. (Տպ. Վենետ. 1865)։

Հռոմայ . . . Այս Կոստանդիանոս բարեկամացեալ ի հարսանիսն ընդ Տրդատայ մեր թագաւորի* :

Տրդատայ թագաւորութիւնը Կոստանդիանոսի հետ՝ աւելի կանուխ ժամանակի պէտք է վերագրուի, ինչպէս վերը ակնարկեցինք: Խորհրդային հոս կը յաւելու թէ Կոստանդիանոսը Դիոկղետիանոս գրած ըլլայ իր հօրը յաջորդ. ապա կը յիշէ այս Մաքսիմիանայ կնոջը խրատով անոր հանած հալածանքը. ապա եղեփանդական բորոտութիւնը, արիողական կախարհներն ու մարիսկեան բժիշկները, Յաղապս որոյ յղեաց առ Տրդատ՝ առաքել նմա դիւքս ի Պարսից եւ ի Հնդկաց. տղայոց շերտ՝ արիւնովը լողանալու առաջարկը, զոր սոսկալով կը մերժէ Կոստանդիանոս՝ լսելով մանկանց լալիւնը, մարց կականմունքը. ապա Աստուծոյ պթութեամբը կը բուժուի Ս. Սեղբաստրոսէն: Աստիք բոլոր անվաւերական դէպքեր են, զորոնք արտաքին հին պատմիչներէն ոմանք ալ իւրապէսցած էին. ուստի Խորհրդային իրօք տեսած է զանոնք:

բ. Ընդ հանգչելն Շապհոյ արքայի Պարսից ի պատերազմացն, եւ ի գնալն Տրդատայ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս, պարապ առեալ խորհրդոց Շապհոյ, նիւքի չարիս ի վերայ մերոյ աշխարհիս. բողեալ զնիւքիսայինսն ամենայն ելանել ի Հայս, ժամ դնէ եւ իւր գալ Արեօք ի միւս կողմանէ . . . եւ այն ինչ ընդհուպ եկեալ մեծին Տրդատայ յարեւմտից, եւ լուեալ զայս ամենայն . . .** :

գ. Տրդատ յարձակած ու յաղթած էր զնիւքիսայինսն ամենայն. բայց շատ մարդ կորսնցուցած ըլլալով Աղուանից պատերազմին մէջ, զանգիսեաց ինքեամբ յաւուկ մարտնչել ընդ Շապհոյ՝ մինչեւ եհաս բազմութիւն զօրուն Հռոմայեցոց, Կոստանդիանոսի բանակը. — առաջին և անմիջական արդիւնք զինակցութեան դաշնացը: Շապհոն աղաչեաց զԿոստանդիանոս զյաղթողն՝ խնդրել զհաշտութիւն: ***

դ. Յայնժամ հասանէ հրովարտակ ինքնակա-

լին Կոստանդիանոսի առ մեր արքայն Տրդատ զի զՍուրբն Գրիգոր առեալ ընդ իւր ի ժողովն (Նիկիայ) երթիցէ. զոր ո՛չ առ յանձն Տրդատ, քանզի լսած էր որ Շապհոն խնամացած էր Հնդկաց թագաւորին և արեւելեան Խաքանայ հետ, ի կասկածի եղեալ զի մի՛ արդեօք պայմանին ստիցէ ըստ սովորութեան, վասն այնորիկ ոչ երող առանց իւր զաւխարհս:*

Կը տեսնուի թէ Կոստանդիանոս կայսրը վարժ է Տրդատն ու Գրիգորը անբաժան տեսնելու, և ի միասին ճամբորդող: Բայց աս անգամ ոչ Տրդատ հին ապահովութիւնն ունէր ուխտադրուժ Սասանեանին վրայ, և ոչ Գրիգոր հին եռանդը ճամբորդութեան: Տրդատ չուզեց, փորձն առած ըլլալով, այս անգամ առանց իւր թողուլ զՀայաստան. և Գրիգոր ձեռք բերած ըլլալով Ս. Քաջահայրապետէն իր հոգեւոր իշխանութեան հաստատութիւնը, այս անգամ խորին խոնարհութեամբ խորշեցաւ մի՛ գուցէ իր նախապէս տեսած մեծամեծ պատիւներն իր խոստովանողութեան կրկին նորոգելին, աս անգամ արեւելեան ժողովոյ մը Հայրապետաց կողմանէ: Դրկեցին միայն զԱրիստակէս, և ասոր ստորագրութեան կը վկայեն արտաքին պատմագիրներ և Նիկիայ ժողովոյն արձանագրութիւնները:

ե. Տրդատայ առ Աստուած փոխուելէն վերջ, 337ին ժամանակները, Հայք պատգամաւոր կը զրկեն Կոստանդիոս կայսեր, որ Խոսրով Բ (իր 337—342) իրենց թագաւոր պահէ: Վրթանէս իր թղթին մէջ կ'ըսէ. ** Յուշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո Կոս-

* Անդ, 2Թ.

** Խոր. Գ. Ե.:

Հոս կը կցենք Կոստանդիանոս կայսեր մէկ վճիռք զոր Հ. Մկրտիչ Աւգերեան, իմաստուն պատմաբան և քննադատ, յառաջ կը բերէ (Վարք Սրբոց Հ. Գ. էջ 479).

« Ի դատաւարական գրոց Կոստանդիանոսի կայսեր, ի տիտղոսն Կոնստանտինոսի (Գրք. ԺԱ. Տ. 4):

« Ինքնակալ Կոստանդիանոս Աւգոստոս առ Պրոկղիանոս (Հոգաբարպետ արքունի): Բաց յառեցին իրաց եւ ի կարողիկէ եկեղեցեաց եւ ի քանի պայծառապէս քաղաքիս քրիստոնէիս՝ որ երբեմն հիւպատոսն էր եւ մե-

* Անդ, 2Գ.

** Անդ, 2Ե.

*** Անդ, 2Զ.

սանդիանոսի, որ առ մերում քաղաւորին Տրդատայ, եւ մի՛ սացես զաշխարհն քո Պարսից անուաստւածից, այլ օգնեսցես մեզ զօրօք՝ քաղաւորեցուցանել զորդի Տրդատայ զխոսրով։

ԵՐԿԻՍՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Կաթողիկէ և Էջմիածնական երկու Հայ իրարու հետ կը տեսնուին, երկրորդը Եւրոպայէ նոր եկած ըլլալով, հետաքրքրութեամբ շատ մը հարցումներ կ'ուզէ իր Պոլսեցեակ բարեկամին, որ սիրայօժար կը պատասխանէ։

Էջմիածնականը. — Ի՞նչ եղաւ ձեր Պատրիարքարանի գործը։

Կարողիկէն. — Ներեցէ՛ք որ նախ ես հարցնեմ ձեզ թէ Պոլսոյ հայ մամուլին և յայտնի կուսակցական կոյր մտայնութեամբ պիտի քննէք ինչիւրը. եթէ այո՛, աւելորդ է խօսիլ։

Է. — Շատոնց կը ճանչնաս զիս, գիտես թէ ո՛րքան կը խորշիմ հակակրեական անխմաստ շարժումէն. գիտես նոյնպէս թէ ո՛րքան դատապարտելի կը գտնեմ Պոլսոյ հայ մամուլին ընթացքը տարիներէ ի վեր Հռոմի հանդէպ, ուստի կրնաս վստահ ըլլալ որ հակառակորդ ազդեցութեան ներքեւ չեմ գտնուիր և խնդիրը աւելի կրօնական բնոյթ ունենալուն, պահ մը ինքզինքս Կաթողիկ պիտի նկատեմ և այնպէս գաղափարս յայտնեմ։

Կ. — Լաւ ուրեմն, այս պայմաններով հաճոյքով կը պատասխանեմ հարցումիդ։ Մեր ներկայ վիճակը գերազանցապէս ցաւալի է. դէպի կործանում կ'երթանք. Կաթողիկոս-Պատրիարք մը ունինք, որ կը սահէ իր եկեղեցական ամբողջ իշխանութիւնը, բայց

զիստոս այրածիոյ, եւ Արեւակայ (կամ Արշակունդ) Հայոց աբխալի, ո՛չ ոք այլ ի մերմէ հրամանէ օժանդակեցի զիսաւոր սաստիւթեամբ բնական ընկից։»

Կը դիտէ հեղինակը ընտանեկան կարգը յորում այդ վճիռը կը յիշէ մեր ազգին անունը զիբեւ զիւրան բնանիս եւ զմեքիմս, իմանալով որպէս երեւի, զհիւրան արշակունիս ի տանէ Տրդատայ Արքայի զոր կոչէ պարզապէս Արսակէս (Arsaces) ու է Արշակ կամ Արշակունի։

զժբախտարար զրկուած է Օտմ. Կառավարութենէն չնորհուած քաղաքական իրաւունքներէն՝ մերայնոց կողմէ հղած կրկնակի զիմումներու հետեւանքով։

Է. — Կանոն մը կա՞յ որ ժողովուրդը կըրնայ Կաթողիկոս-Պատրիարքը հրաժարեցնել։

Կ. — Բացարձակապէս ոչ, ցկեանս է իր պաշտօնը, իբր կրօնական կանոն ոչ ոք կըրնայ զինքը հրաժարեցնել։

Է. — Ուրեմն շատ սխալ քայլ մը առնուած է Պետութեան դիմուելով, որ միշտ չա՛ն ունի Պատրիարքարաններու տրուած առանձնաչնորհումները սեղմելու մէջ. Նոյնն է մեր մէջ ալ, միայն Պոլսոյ Պատրիարքը կարելի է ըստ Սահմանադրութեան Ազգ. Ժողովի կողմէ ինչ ինչ պարագաներու տակ հրաժարեցնել, իսկ երբեք որ և է պայմանով կարելի չէ Էջմիածնայ կամ Կիլիկիոյ Կաթողիկոսները ինչպէս նաեւ Երուսաղեմայ Պատրիարքը հրաժարեցնել, վասն զի այս պաշտօնները ցկեանս են։

Կ. — Ահա միեւնոյնն է մեզ համար ալ, և մեր կրօնական վերին գլուխը, Ս. Պապը, բացարձակապէս պիտի չներէ որ եկեղեցական օրէնքներով անփոփոխելի նկատուած հոգեւոր պաշտօնեայք քաղաքական կամ ժողովրդական ուժերէ փոփոխուին։

Է. — Կը հասկնամ գործին ներկայ վիճակը, Հռոմի համար գլխաւորութեամբ սկզբունքի և արժանապատուութեան ինչորի է։ Կի կըրնար տեղի տալ, ապա թէ ոչ շատ գէշ նախընթաց մը կ'ըլլայ, նոյնը կրնայ պատահիլ ուրիշ երկիրներ ալ, Կը մնայ միակ միջոց մը եթէ Կաթողիկ մնալ կ'ուզէք, այն է Հռոմի հրահանգներուն համակերպիլ, ինչպէս կը համակերպին Դաւղիոյ, Գերմանիոյ, Անգլիոյ և ամբողջ աշխարհի Կաթողիկները։

Կ. — Ճիշդ այսպէս կը մտածէ հասարակութեան ուղղամիտ մեծամասնութիւնը որ կ'ուզէ հղած յաւէտ ցաւալի դէպքերը մոռնալ և մնալ իր կրօնական պետերուն հետ իր դաւանանքին մէջ, Բայց եկուր տես որ աշխարհականներէ կազմուած Վարչական ըսուած ժողով մը կայ, որուն գործին չի գար համեմալխութիւն, որ կ'ուզէ պայքարը շա-

բունակիւ հասնելու համար... կործանումի
է. — Բայց այս անձերը եթէ իրապէս ազ-
գային շահերը պաշտպանել կ'ուզեն, պէտք
է գիտնան որ Հայութեան գերագոյն շահը
կը պահանջէ որ այժմ Հայոց ամէն բաժա-
նումներուն մէջ ներքին երկպառակութիւն
գոյութիւն չունենայ, ամէն տեղ համերաշ-
խութիւն տիրէ. որպէս զի Եւրոպա նորէն
մեր երեսը չզարնէ մեր ներքին անմիաբա-
նութիւնը և անզգաստութիւնը:

Կ. — Իրաւունք ունիս, այս ընթացքով
Հայութեան ո՛չ թէ շահ կայ, ինչպէս կը
յուսան ուսման, այլ վնաս: Ինչպէս կարելի
է այս ուղղութեամբ աշխատիլ, երբ հայ
մամուլն է որ ամէնէն առաջ չուզեր հասկը-
նալ այս ճշմարտութիւնը և կը քաջալերէ
խուժանային ամէն շարժում Հայ Կաթողի-
կէից մէջ:

Ե. — Հայ Մամուլը՝ Բանի՛ քանի՛ ան-
գամ բարեկամներու շրջանակի մէջ յայտնած
եմ իմ կարծիքս. հեռուն տեսնող, ապագան
գուշակող խմբագիրներու պէտք ունինք, որ-
պէս զի դադրի անաւարտութիւնը կենսա-
կան հարցերու, հակաճառութիւնը երկրոր-
դական և անձնական շահերու շուրջ:

Կ. — Ձեզի պէս մտածողներ շատ քիչ են
դժբախտաբար:

Աղագրեց
ՊՍԱԿ ԴՊԻՐ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

Ի Դ Ե Ն Ճ Ի Պ Ս Պ

Յիսուս Քրիստոսը սիմաբոսաբի
առիւմ կիւզել չիզկիլէ:

Պիւթիւն պէտքիւ քիքիւրէր պիլ իթթի-
ֆազ իզրար իտէրէր քի Յիսուստա տտէթա
ինսանտան ֆարզը պիր չէյ վար տըր:

Փաղաթ պիլ տէվամ խտէլիմ: Շիմտիյէ
գատար կէօրաիւքիւրիմիզ տահա Յիսուսըն
սիմաուրնը թէզիւն էյէյէն տահա պաղը խա-

Ֆիֆ ալայիմը վէճիյէսի տիր: Հալպու քի
ինթիպատ տահա զիլատէ քէսպի նուֆուզ
իթտիքճէ, թէտգիլաթ ազլ ու ճիտտիյէթ
տաիրէսինտէ ճէրէհան էյէտիքճէ, Յիսուսըն
թապիլաթընտա էսկի միւտաֆիլէրին խաթ-
ընտան պիլէ կէչմէյէն հալլէր թէճէլլի խաթ-
յօր: Իւլուիւ հալըրէնին թէհիյէ իթտիյի
միւքէմմէլ ալէթլէրլէ թէտգիզ օլունան սէ-
մատա հէնի հէնի բարլազ երլաղլարա թէ-
սատիւֆ օլունաուղը կիպի, Յիսուսը թէտ-
գիզ խտէն տէ օնուն սիմաբոստա հէնի հէնի
շաշատաար խաթթլարա բաթ կէլիր:

Ազ էվլէլ պահա իթտիյիմիզ էն երեքսէք
տէրէճէտէ վէ էն թէմամ պիր ահէնկլէ օնտա
իճթիմա իտէրէք օնուն ինսանի կիւզէլլիյինին
էվճի պալասընը թէչքիլ էյէյէն կիւզէլլիյին-
տէն մատա, Յիսուստա քէչֆի, անլալըմա-
սը գօլայ օլմայան նա միւթէնահի վէ հատ-
տէն խարիճ հալլէր տէ թէզաեիւտ իթմէյէ
պալլար: Օնուն ինսան օլտուղը հիսս օլու-
նուր, ֆաղաթ հէր տաղիզա օնուն ինսան-
տան իւսթիւն պիր չէյ օլտուղը տա կէօրիւ-
լիւր: Պիլմէզսին, օնտաքի միւսթաղիլ, ու-
մումի, նիհայէթսիզ պիր գուվլէյի մանէվի-
յէ՝ սայլը ինսանլարտաքի ատէթա հուտու-
լարը Յիսուստա տրամամազըրըմըզը պիլէ
իւթար իտէր: Պիր քէրրէ սըրա իլէ օնուն
քէմալը ախլաղիսինի, շախսիյէթինի, ամէ-
լինի, ֆիքրինի թէտգիզ էյլէ, էվլէթ, չէք-
լինի կէօրէճէք, ֆաղաթ էօլլիւսիւնիւ գա-
թիէն պուլամայաճագսըն:

Օնուն քէմալը ախլաղիսինին (բարոյական
կատարելութիւն) էօլլիւսիւ մի: Անճագ պիր
թարաֆտա պիր մուգայէսէ նօզթասը պուլ-
մազլա օ էօլլիւյէ տէսթրէն օլաճագսըն: Փա-
ղաթ պու նօզթա նէրէտէ՞ տիր: Կէչմիշ զէ-
մանտան պահո իթմէյի խաթէմէմ, չիւնքի զէ-
մանը գատիմտէ պու տէրէճէ քէմալ՝ խայալ-
տան պիլէ կէչմէզաի: Ձէնինիկ «Յիսուս քէն-
սի պէօյիւքիւրիւ վէ կիւզէլլիյի իլէ ինսանի
քէմալիյէթլէրին քիտաֆէսինի սիւքիւթա
մահքիւմ էյլէտի» տէր: Հալպու քի օնուն
պէօյիւքիւրիւ վէ կիւզէլլիյի եալընըզ քէն-
տինտէն էվլէլ օլան ինսանի քէմայիյէթլէրի
տէյիլ, հաթթա քէնտինտէն սօնրա կէլէնլէ-

(*) Տես Թիւ 99, էջ 373.

րի, քէնտինին եարաթորը քէմալիյէթլէրի տէ սիւքութա մահքիւմ էթմիշ տիր, Զիւնքի Յիսուսըն տիւնեայը թէշրիյֆ էթմէսի, աստէթա պիր չիմէք չագմասընա պէնգէսի քի օ ըշըգ զէմանընտա՝ տահա օ վազթա գատար մէճհուլ օլան եէնի պիր նիւմունէյի քէմալաթ կէօրիւլտիւ վէ հէր քէստէ ծաա պէնգէմէյէ պիր սէվտա ուշանսըրտուր, Իշթէ ծա սէքիզ ասըրտան զիյատէ սիր քի պու սուրէթ, պու նիւմունէ տիւնեայա արզ օլունմուշ սըր, միւլիօնլարճա ինսանլար ծոուն թըպգըսընը չըգարմաղա չալըշտըղլարը հալտէ, նէ գատար մէհարէթլէ ծըր թէրսիմ խոյօրլարսա, օ գատար տա Փարզընտա օլույօրլար քի ծոտա թանգլիրի զայրը գապիլ պիր կիւզէլիք վար տըր, պազը ալալիսինէ միւշապէհէթ գապիլ օլմուշաա տա, ծաա թաւմ միւսապի օլմազ քիմնէյէ միւշէսսէր օլմամըշ տըր, Միւս պազարազ չէքիլէն սուրէթլէրտէ, ինտանը հայրէթտէ պրապան հիւզպիւլէր վար տըր, պիր դըմնտա ծոուն բսքըղը լարլարյօր, պազըլարընտա տա ծոուն գուվլէթի նիւմունէն օլույօր, Մամաֆիյհ, պունլարտան հիշ պիրի, վէլէվ բէք ուղապտան օլուն, մուգայէսէյէ յծոուլամազ, Ֆագաթ պէն նէ տէյօրլմ քի, Յիսուսըն կիւզէլիյի, եալընը պիլ ճիւմէ կարատըմըշ կիւզէլիքլէրէ ֆայիզ աէյիլ տիր, իլա օ հատտը զաթընտա միւսթագիլ տիր, պիր տանէճիք տիր, ծոուն միւլի թէսալվուր օլունամազ:

Պիր կիւզէլիք միւվաճէհէսինտէ պուլունտուղըմըզ վագըթ նէ քի վագը օլուրսա պիլիւսինիզ, էվվէլ էմիրտէ միւթէհայիյր պիր սուրէթտէ ծըր սէյր իտէրիզ, պատէհու, պու թէճէլի, պու կէօրիւնիւշ գանատլարըմըզ գալտըրըր, տահա հիւքսէյէ սուուա իտէրիզ, պունա ֆայիզ պիր միւքէմմէլ կիւզէլիք կէօրիւրիւզ քի, եարտտըլմըշ օլան քեաֆֆէյի կիւզէլիքլէր հէր նէ գատար միւշաշա օլտալար պիլէ, ծոուն անճազ զայրը քեամիլ պիր պէնգէսիլիշ հալինտէ գալըրլար, վէ պիլ կիւքսէլտիքճէ, խայալխանէմիզ թէվէտիւ իթտիքճէ, օ իտէալ կիւզէլիք նազարլարըմըզտան տահա ուղաղա չէքիլիր, վէ պու չէքիլմէսիյէ պիլի պիր թարաֆտան մէյուս

իտէրտէ տէ, տիկէր թարաֆտան կէօրտիւյիւմիւզիւ, հիշ տէյիլտէ սուրէթի միւմքինէտէ թէմիլ իթմէյէ պիլտէ պիր չէվգ ուշանտըրըր, Իմտի Յիսուս Քրիստոսըն սէյր ու թէմաշասընտա մէնգարէ պիւսպիւթիւն տէյիշիր, պուրատա իտէալըն արգասընտան գօշմազ իշուն ճիտտիյէթի թէրք իթմէյիզ, իլա տէսթրէս օլմատըղըմըզ պիլզաթ ճիտտիյէթ, հագըգէթ քէնտին տիր, Յիսուս Քրիստոսըն սէյր իթտիլիմիզտէ, ծոուն իտէալընը գաշտըղընը կէօրմէյիզ, նազարըմըզ գարշընտա հիւքսէլէն, կիթտիքճէ հիւքսէլէն պիլզաթ Աւետարանլարտա թարիֆ թէվսիֆ օլունան ճիտտի, հագըգի Յիսուս Քրիստոս տըր քի, ծըր նէ գալէմէ, նէ բէստամ ֆըրշասըլա, նէ մէհէրէնին մագասըլա վէ նէ տէ հիւքսէլէն թանգլիր, թէմիլ իթմէք միւմքին տէյիլ տիր, Իշթէ պու հալտըր քի պու տէրէճէտէքի հիւքսէք օլան պիր կիւզէլիյէ պէնգէյէմէմէսի իշուն, երանելի Ֆիօզէլեան Անֆէլիքէ կէօզ եաշարը տէօքտիւրիւրաթիւ, Լիօնարտօ Վինչլինին էլինտէն հիտտէթլէ գալէմի տիւշիւրիւրաթիւ, Պօսիւէ վէ Բասքալը գաթիի իւմիտ էտէրտի, Իլք տէֆայըտը, պա խուսուս եալընըզ պու տէֆայըտը քի սանատթըն քէմալէթի միւքէմմէլէսի թարիլի պիր հագիգաթըն մատունընտա գալըյօրտը վէ ահապը տէհանըն գուվլէյի թէխայիւլիյէսի պիլէ ճիտտիյէթ վէ հագըգէթի թապիլր իթմէքտէն աճիզ պուլունույօրտը:

(Մապաի վար)

ՕՐՄԱՆԵԱՆԻ

”ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ, ԳԻՐԲԸ (“)

Դ.

(Շար.)

Դանք հիմայ նախնական հւ հուսաւուն աւանդութեան պատմական հիմը քննելու գէթ հարեւանցի ակնարկ մը նետելով պատմական վաւերագրերու վրայ, որոնց պարզ քննութիւնն իսկ անհերքելի կերպով ցու-

(*) Տես թիւ 99, էջ 376:

ցուցած է թէ այդ աւանդութիւնն անհիմն է ու վիպական յերևանք, որ Ասորիէն առ Հայ գրիչն անցնելով այլեւայլ նպատակաւոր փոփոխութիւններ կրած է: Յայտնի է թէ Արտազի և Աղբակի ուխտատեղիներու աւանդութիւնը Արգարու անպատմական աւանդութեան յարակից է ու անոր հայացած մասին շարունակութիւն մը. ուստի այն վըտարուելով պատմութենէ, միւսն ալ ո՛չ միայն առաքելական դարէ հեռի, այլ պատմութենէ ալ դուրս պիտի ձգուի:

Հստ Եւսեբիոսի, Թադէոսի առ Արգար երթը տեղի ունեցած կ'ըլլայ 340ին, այսինքն Քրիստոսի 29 թուին. բայց գիտենք թէ Յիսուսի ժամանակակից Արգարը (Ե.) որ անգամ մը Յիսուսէն առաջ (4—7ին), անգամ մըն ալ Յիսուսէն վերջը (13—50ին) թագաւորած է, հեթանոս էր և հեթանոս մեռաւ. նոյնպէս անոր յաջորդները մինչեւ երկրորդ դարու վերջին քառորդը հեթանոս էին. ըսել է թէ մինչեւ այդ ատեն պատմութեան մնալով կարելի չէ ենթադրել Առաքելոյ մը երթը յեղեւիտ, Առաջին փոխարքան Նեքսիոյ, որ քրիստոնէութեան դարձեր է, եղած է Արգար Թ. (179—214), և այս է որ Արգար Ե. ի հետ ուզեր են շփոթել, ինչպէս ասորական վէպը նոյնպէս զայն հայացնող գրիչը: Այս կեղծ հիման վրայ յերևուած է թղթակցութիւնը որ Քրիստոսի Տեառն մերոյ և Արգարի միջեւ փոխանցուած կ'ենթադրուի: Այս թղթերու անվաւերականութիւնը ըստ ինքեան ապացոյց մըն է նոյն աւանդութեան անպատմական ըլլալուն: Ո՞վ չգիտեր թէ քրիստոնէութեան առաջին դարուց ջատագովներու ձեռքը ի՞նչ զօրեղ փառոտ պիտի ըլլար հեթանոսաց դէմ այդ նամակը եթէ ծանօթ ըլլար, և ծանօթ պիտի ըլլար անշուշտ եթէ քանուէր: Մեզ ծանօթ Ս. Գրոց վաւերական մասերէն զատ ուրիշ ամէն Աւետարան ու գրութիւն մերժուած է ժամանակի Ս. Հայրերէ: Այսպէս Ս. Հերոնիմոս կը մերժէ Քրիստոսի Տեառն մերոյ ընծայուած ամէն գրութիւն և Ս. Օգոստինոս կ'ըսէ. եթէ վաւերական ըլլային եկեղեցեաց մէջ պիտի կարդացուէին. ինչ որ երբեք չէ եղած Քրիստոսի առ Արգար գրածը:

Ասկից զատ, Արգարի նամակին մէջ ո՞վ չտեսներ Աւետարանի տեղեակ գրչի խաղը, որ Քրիստոսի Տեառն մերոյ հրաշքները նոյն կարգաւ կը պատմէ, որով Մատթէոսի ու Ղուկասու մէջ կարդացածնուս համաձայն նոյն ինքն Տէրը թուարկած էր իր գործերը Յովհաննու աշակերտաց:

Ասորական պատմութիւնը ուրեմն երկրորդ դարու վերջերէն առաջ չի կրնար ըլլալ. իսկ Հայը շատ աւելի ուշ եկած եւ հայացուցեր է զայն փոխելով կամաց կամաց ու վերածելով այն աւանդութեան, զոր նախնական և հաստատուն կ'անուանէ Օրմանեան: Կրնայ ըսածնիս լուսաբանել Ասորականին և Հայուն մէկ հարեւանցի համեմատութիւնը: ա.) Եւսեբիոյն թարգմանութիւնը և Լաբուքնայի ասորական պատմութիւնը բնաւ բացէն Հայաստանը չեն յիշեր իբրեւ Թադէոսի քարոզութեան միջավայր, ինչ որ Աղգէի վարդապետութեան հայ թարգմանութիւնը կ'ընէ ամէն բանէ առաջ: բ.) Այս թարգմանութեան մէջ Արգարը նախ Մանավայի որդի կը կոչուի, յետոյ Արշամի որդի կ'ըսուի իր առ Քրիստոս գրած նամակին գլուխը: գ.) Թադէոսի յեղեւիտ հիւանդութիւնը, մահը և թաղումը ջրնջուած է հայ թարգմանութեան մէջէն և անոր տեղ զրուած է այսպէս. «Աղգէ Առաքեալը ուղեց երթալ քարոզութեան Արեւելքի և Ասորիստանի երկիրները»: դ.) Թագաւորին խոյրը հիւսողին Անգէի տեղ՝ Հայը Աղգէ կը դնէ, զայն Ասորին՝ Առաքելոյն տեղ վարիչ կարգուած կ'ըսէ. իսկ Հայը՝ եպիսկոպոս ձեռնադրուած: ե.) Առաքելոյն քարոզը ասորականին թարգմանութիւնն է Հայուն մէջ, բայց յետոյ ասորականին սլէս ըսելու տեղ թէ Առաքեալը «իւր յորդորներէն ետքը մեկնեցաւ յաշխարհէս», կ'ըսէ. «Երեք օր վերջը ճամբայ ելաւ դէպի Արեւելք Քրիստոսի Աւետարանը քարոզելու համար»: զ.) Հայ թարգմանիչը զԱղգէն կը գեանդէ յեղեւիտ, իբրեւ յաջորդ Թադէի՝ ասորական Անգէին տեղ: Նւրիտեւու է որ ասորական Աղգան է զոր Հայը Թադէոս կ'ընէ և զայս Ասորականը բնական մահուամբ մեռած կ'աւանդէ, որուն կը յաջորդէ Անգէ: հ.) Հայ Աղգէի մահը նոյնն է

ուրեմն ասորական Մնգէին հետ, միայն Հայը պարադայ մը կ'աւելցնէ Թաղէոսի մահուան նկատմամբ զայն յնդեսիայէն այլուր փոխադրելով. որուն վրայ յետոյ հայ երեւակայութիւնը Արտաղ կը գետեղէ այդ առաքելոյն կամ աշակերտին գերեզմանը, մինչդեռ ասորական աւելի հին աւանդութիւնք յնդեսիա կը դնեն: Բ.) Արդ զուարճալին այն է, որ Ասորական Մնգէ յետոյ Աջգէ եղած Հայուն ձեռքը, օրին մէկն ալ Թաղգէ կամ Թաղէոս կ'ըլլայ, որ Քրիստոսի աշակերտներէն մէկն ըլլալով Թովմաս Առաքեալէն կը զրկուի և ժամանակ մըն ալ այս նոյն Թաղէոսը՝ Թովմաս Առաքեալին եղբայրը՝ Թաղէոս երկուորեալը կը հռչակեն: Բ) Այսպէս ասորական Մնգէի վրայ պատմուած վկայաբանութիւնը կը տեսնենք յետոյ ուրիշ ձեռագրի մէջ Թաղէոսի վրայ պատմուած և այնպիսի պատմական պարագաներով որոնք այդ մահունէ գոնէ երկու հարիւր տարի վերջն են: Վասն զի հոն զոր օր. Մովսէս մէջ Անգեղ աւանին մէջ սպաննուած կ'ըսուի Արգարի որդւոյն Սեբերիոսի ձեռքը: Արդ ասորական իշխանաց հոովմէական անուն սալու սովորութիւնը երկրորդ դարու վերջերը մնած է և այդ Սեբերիոս անունը Արգարի զաւակը առած կ'ըլլայ Աղեքսանդր Սեբերիոսի պատւոյն համար:

Ահա պատմական կերպարանափոխութեան (Métamorphose) նմոյշ մը, յորում ազգայնութեան զգացումը կ'այլայլէ ու կ'աղաւաղէ ուղածին պէս զպատմութիւնը: Բայց երբ սկսած է Թաղէոսի վէպը Հայոց մէջ, Բիւզանդացւոյն պատմութեան մէջ գրչապրաց ձեռքը յայտնապէս կը տեսնուի, որ ուղած են մուծել Թաղէոսի անունը հոն իսկ, ուր պատմութիւնը առանց այդ անունին յայտնապէս ուղիղ է և միւս կողմէ միջանկեալ այդ յիշատակութիւնը ոճի տարբերութենէ ալ կը մատնուի թէ աղաւաղող գրչի խաղ ըլլայ: Ուստի չի կրնար այդ պատմագրի դարուն արուիլ այդ աւանդութիւնը: Առաջին անգամ վեցերորդ դարու կիսուն Յովհաննէս Բ. Կաթողիկոս զԳրիգոր Լուսաւորիչ կ'անուանէ յաջորդ Թաղէոսի: Այս իմաստով զար-

մանալու չէ որ Հայերը անկախութեան խարխիս մը փնտռելու մտքով նոյն իսկ Լաբուրնիայի ասորական աւանդութեան իւրաքանչեւ անբաւական սեպած ըլլան և ուրիշ զուտ ազգային վէպ մը յերիւրած ըլլան Ասորիէ և ուրիշներէ անջատ աւանդութիւն մը մէջտեղ նետելու համար: Այսպէս է որ Թաղէոսի վկայաբանութիւնը Սանատրուկ հայ թագաւորին օրին կը կցուի և այդ առթիւ շատ զուարճալի է տեսնել թէ ինչպէս Կեսարիա քաղաքը կը հայացուի նոյն եղանակաւ որով Լաբուրնիայի հայացման մէջ Եդեսիան հայացուցուած էր: Ահա թէ ինչպէս Հայոց եկեղեցւոյն նախնական եւ հաստատուն աւանդութիւնը իրեն սկզբնական հիմնադիրներ կը ճանչնայ Ս. Թաղէոս եւ Ս. Բարսղիմէոս Առաքեալները, զորս ինքն յայտնաբերուած ալ Առաջին Լուսաւորիչ Հայաստանեայց կ'անուանէ»:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Յուլիս 29	† Կիր. թժ. է. — Վարդափառ
30	† Բշ. թժ. Բ. օր »
Յուլիս 1	Գշ. թժ. Գ. օր »
2	Դշ. թժ. Պահոց
3	Եշ. թժ. Յսայի Մարգարէին
4	Ուրբ. թժ. Պահոց
5	Շր. ած. Թաղէոսի Առաքելուն եւ Սանդիսոյ կուսին եւ Շուշանայ դստեր Մեծին Վրդն.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

(Շար.)

Երբ ամէնքը հաւաքուել էին ազօթաժայռը՝ Ս. Գրիգոր հրամայեց որ ծնրաբերն որպէս զի բոլորովին բժշկուին. ինքն ալ ծուռիկ եկաւ և եռանդաբեր ազօթեց: Թագաւորը և միւս հարուածեալները իսկոյն իրենց ախտերէն իսպառ ազատուեցան և սկսան օրհնել ու փառաւորել Աստուծոյ անհուն ողորմութիւնն ու մեծութիւնը: Անկարողելի է այն խանդավառութիւնը որ այս հաշքին վրայ տեղի ունեցաւ ամէն կողմ:

Տրգաւտ հաւատոյ պայծառ լոյսով լիցած և

Աստուծոյ սուրբ սիրով վառուած հրամայեց որ կուռքերը սնոյնաւոր ընտելն զերնան ամէն կողմերէն Այն ատեն Ս. Գրիգոր Թագաւորին հետ սկսաւ պատիլ և մեհտանները, բազմաները կործանել մեծամեծ հրաշքներով որոնք տւելի ևս հաստատեցին և ծաւալեցին Ս. հաւատքը Գուրմերը և անոնց սպասուորները Եկեղեցւոյ ծառայութեան սահմանեց. մեհտաններուն կալուածներն ու եկամուտներն ալ փութանցեց եկեղեցւոյ. մեհտաններուն գանձերէն մեծ մաս հանեց ազգաստեղծ, որբերու, աղքատներու, Հայաստանի ամէն քաղաքներուն, տաւաններուն, գիւղերուն և ազատականներուն մէջ եկեղեցիի տեղեր որոշեց, բայց շէնք կամ խորան չէր կառուցաներ, այլ միայն պատով զը ըջլափակէր նոյն տեղերը և խաչ կը կանգնէր. որովհետեւ ինքը քահանայ չէր:

Գրիգոր այնուհետեւ մեծ եռանդով սկսաւ քրիստոնէական վարդապետութեան մէջ հրահանգել, հաստատել մասնաւորապէս արքունիքը, տաւաճանին և բանակը: Իսկ Թագաւորը ընդհանուր ժողովի հրաւիրեց պետութեան բոլոր մեծամեծները և անոնց հետ որոշեց Ս. Գրիգորը զրկել Կեսարիա, Ղեւոնդիոս Արքեպիս. քով, անկէ ձեռնադրուելու համար Ս. Գրիգոր հակառակ իր կամքին, ստիպուեցաւ համակերպելու այս որոշման, Կեսարիա գնաց տանեւ Տիգրանաւորներու հետ: Մեծ հանդէսով եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, Ղեւոնդիոս Հայրապետէն պարգեւ ընդունեցաւ Յովհաննէս Կարապետին և Աթանաքիոս Եպիսկոպոսին նշխարները. հետը աւաւ բազմաթիւ քահանաներ և քահանայացուներ և զարձաւ Հայաստան: Ճամբան հասած տեղերը եկեղեցիներ շինել կուտար, ժողովուրդը կը մկրտէր, քահանաներ կը գնէր: Եփրատի ափը, Բագուանի մօտ, Տրդատ Թագաւորը Աշխէն տիկնոջ և Խորովիդուխտ քրոջ և ստուար բանակին հետ գլխաւորեց Ս. Գրիգորը, որ իր անդրանիկ օրհնութեամբ և երկնային խօսքերով խանգաւառեց զամէնքը: Ապա ամիս մը ամբողջ պահքով ազօթքով ու քրիստոնէական վարդապետութեամբ պատրաստուեցան ամէնքը և մկրտուեցան. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Մկրտութեան ատեն Եփրատի վտայ երեցաւ խաչաբարձ հըրաշալի սիւն մը այնքան պայծաւ որ արեւուն լոյսը կ'ազօտացնէր: Երեկոյեան դէմ այս սքանչելիքը աներևոյթ եղաւ, և ամէնքը դարձան տաւան:

Երկրորդ օրը Ս. Հայրապետը պատարագեց և զամէնքը հաղորդեց: Եօթը օրուան ջափ ալ հոն կեցաւ և քահանաներուն հետ մկրտեց միլիոնաւոր մարդիկ, որոնք ամէն կողմէ հոն կու գային հետզհետէ: Այնուհետեւ օժանդակութեամբ աստուածատէր Թագաւորին, Հայաստանի մէջ ամէն տեղ ըստ պատշաճի եկեղեցի, մատուռ շինել տուաւ, հոգեւոր պաշտօնականներ, քահանաներ և եպիսկոպոսներ դրաւ և անոնց հաս սահմանեց: Գրգորներ բացաւ, Հայաստանի ամէն կողմերէն ուղիմ պատանիներ ժողովեց և իմաստուն վարժապետներու յանձնեց: Աշակերտներէ ոմանք կ'ու-

ստնէին ասորերէն և ոմանք յունարէն. և նոյն լեզուներով գրուած սրբազան վարդապետութեանց հմտանալով, զանոնք մայրենի բարբառով կը ծաւալէին ժողովրդեան ամէն խաւերուն մէջ: Ս. Հայրապետը հաստատեց նաեւ զանազան կրօնաւորական հաստատութիւններ: Բայց ամենէն տւելի հոգ տարաւ քուրմերու զաւակներուն, որոնցմէ շատերը Վաղարշապատի հայրապետանոցին մէջ ինք անձամբ գոտախորակեց, հրահանգեց և եպիսկոպոս ձեռնադրեց: Երբեք եպիսկոպոս ձեռնադրուողներուն թիւը չորս հարիւրի հասաւ, անոնցմէ մէկն էր նաեւ իր կրտսեր որդին Արիստակէս, զոր Տրդատ Վ. Թանէս եղբորը հետ բերել տուաւ Կեսարիայէն: Արիստակէս հօրը ծերութեան ատեն, մանաւանդ անոր հայրապետութեան վերջին տարիները, փոխանորդութեան պաշտօնը կը վարէր:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրք Ա.—Գլ. ԺԱ.—Խաղաղութիւն աստուար
եւ յառաջդիմութեան եռամիջի վրայ:

(Շար.)

Եթէ մեզ մեզի կասարեղապէս մեռած եւ ի ներքուս անգրաղ ու ազաւ ըլլայիմ, այն ասեմ պիտի կարենայիմ աստուածային բաները ըմբռնել ու անոնց բախանցել ու երկնային հայեցողութեան փոք ինչ ճաշակն աւնուլ:

Բոլոր ու անկամեծ արգելն այն է որ, ազաւ լիմ կրտսեր ու ցանկաբիւններէ, ու լիմ ջանք տուրաւու կասարեղ ճանքուն մեջ մեզնի:

Որով երբ պզտիկ դժուարութիւն մը առջեւնի ելի, արագ արագ կը վհատիմ ու մարդկային միտքաբանիմնու կը դիմեմ:

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

Յիսուսի Ս. Սրտին ջերմեանգութիւնը ժողովրդեան ամէն դասակարգին իմանալի ու մատչելի ընելու նպատակաւ Ս. Եկեղեցին ամէն միջոց գործածած է. և Աստուծոյ հոգւով եռացող մարդիկ այս վախճանաւ հարիւրաւոր հատորներ հրատարակած են և անդադար կը հրատարակեն:

